

Խմբի անունից հանդես եկող անձի ներկայացված կամ պաշտպանված հայցի վերաբերյալ ծանուցում

ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ, ԴԱՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԴԱՏԱԿԱՆ ԼՍՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԾԱՆՈՒՑՈՒՄ

ԸՍՏ՝ *Nozzi v. Lnu Անջելեսի քաղաքային բնակարանային իշխանությունը* և այլն, Գործ թիվ՝ CV 07-00380 PA (FFMx)

Esta Notificación de arreglo colectivo está disponible en español. Llame sin cargo: **1-888-268-5894**
o visite el siguiente sitio web: www.HACLAClassAction.com:

Կալիֆոռնիայի Կենտրոնական նահանգի Միացյալ Նահանգների շրջանային դատարանում ներկայումս սպասվում է խմբային հայցի հիմքով դատավարություն: Դատարանը հաստատել է հայցը որպես խմբային: Եթե ներկայացված հայցային պահանջը դատարանի կողմից բավարարվի, խմբի անդամներն իրավասու են գումար ստանալու:

Եթե 2004 թվականի հունիսի 1-ից մինչև 2005 թվականի հունիսի 1-ը Դուք հանդիսացել եք (Բնակարանի ընտրության վաուչերի վճարման բաժին 8-ի մասնակից) Lnu Անջելեսի քաղաքային բնակարանային իշխանության միջոցով, ապա Դուք իրավասու եք եղել ստանալու մեկ տարվա նախնական ծանուցում այն մասին, որ HACLA -ն պատրաստվում էր նվազեցնել Ձեր վարձավճարում կատարված ներդրումը (ենթակա է հետագայում ներկայացված որոշակի սահմանափակումների):

**Հնարավոր է, որ Դուք ԽՄԲԱՅԻՆ ՀԱՅՑԻ ՄԱՍՆԱԿԻՑ եք և իրավասու եք ԳՈՒՄԱՐ ստանալու՝
միայն այն դեպքում, եթե միջոցառումներ ձեռնարկեք և հայց ներկայացնեք:**

Կալիֆոռնիայի Կենտրոնական նահանգի Միացյալ Նահանգների շրջանային դատարանում ներկայումս սպասվող խմբային հայցի հիմքով դատավարությունը վիճարկել է վարձավճարի սուբսիդավորման կրճատման օրինականությունը, **քանի որ HACLA-ի՝ վարձավճարի սուբսիդավորման կրճատման վերաբերյալ ծանուցումը հստակ կերպով չի բացատրել, թե HACLA-ն ինչ էր իրականացնում:**

Եթե Դուք հանդիսանաք նման մասնակից և բավարարեք սույն ծանուցման մեջ հետագայում նկարագրված այլ չափանիշներին, հնարավոր է, որ Դուք իրավասու լինեք ստանալու Ձեր տանուտիրոջը 2005 թվականի հուլիսի 1-ից մինչև 2007 թվականի ապրիլի 30-ը մինչև 11 ամիս շարունակ վճարված լրացուցիչ վաճավճարները: Կախված Ձեր հանգամանքներից, Դուք *հնարավոր է՝ ստանաք մի քանի հարյուր դոլլարի չափով* փոխհատուցում, իսկ որոշ դեպքերում՝ ավելի շատ:

HACLA գրառումները ցույց են տալիս, որ Դուք հնարավոր է՝ **ԽՄԲԱՅԻՆ ՀԱՅՑԻ ՄԱՍՆԱԿԻՑ եք:** Այդ իսկ պատճառով, Դուք հնարավոր է՝ իրավասու լինեք գումար ստանալու ԴԱՏԱԿԱՆ հայցապահանջի բավարարման արդյունքում: Այս կարգավորման ընթացքում որևէ փոխհատուցում ստանալու համար Դուք պետք է լրացնեք և ուղարկեք հայցային պահանջի Ձևաթուղթ:

Հայցային պահանջի Ձեր ձևաթուղթը պետք է ունենա փոստային կնիք կամ ստացված լինի Ադմինիստրատորի կողմից ոչ ուշ, քան 2017 թվականի դեկտեմբերի 6-ը:

Եթե Դուք ցանկանում եք <<դուրս մնալ>> կամ հեռացվել Վճարային կարգավորումներից, Ձեր հեռացման նամակը պետք է ունենա փոստային կնիք կամ ստացված լինի Ադմինիստրատորի կողմից մինչև 2017 թվականի նոյեմբերի 29-ը:

Նույնիսկ եթե Դուք հայցային պահանջի ձևաթուղթ չհանձնեք կամ մինչև վերոնշյալ ժամկետը դուրս մնաք Վճարային կարգավորումներից, Դուք կունենաք Վճարային կարգավորումների պայմաններից բխող պարտավորություններ:

Եթե դուք ցանկանում եք պահանջել Վճարային կարգավորումներից ստացվելիք գումարի Ձեր մասնաբաժինը, Լրացրեք և էլեկտրոնային փոստով ուղարկեք կից հայցային պահանջի ձևաթուղթը:

Ստորև այն հարցերը և պատասխաններն են, որոնք նախատեսված են բացատրելու համար դատավարության այս գործընթացը՝ ներառյալ հայցադիմումի ներկայացումը կամ ,թե ինչպես մասնակցել Վճարային կարգավորման գործընթացին:

1. ԻՆՉԻ՞ ՄԱՍԻՆ Է ԽՄԲԱՅԻՆ ՀԱՅՑԱՅԻՆ ՊԱՀԱՆՁ:

Այս հայցով բողոքարկվել է HACLA-ի ծանուցման համապատասխանությունը՝ բացատրելով Բաժին 8-ի մասնակիցների սուբսիդավորման կրճատումը: Հայցային պահանջն այն է, որ ծանուցման մեջ, որ պետք է Բաժին 8-ի մասնակիցները ստանային նվազեցված սուբսիդավորման ուժի մեջ մտնելուց մեկ տարի առաջ նախապես, այնքան թերի էր ներկայացված կրճատման ազդեցությունը, որ այն խախտել էր սահմանադրական իրավունքը ըստ օրենքի պատշաճ ընթացակարգի և Կալիֆոռնիայի որոշակի նահանգային օրենքների: Արդյունքում, ըստ հայցի, HACLA-ի սուբսիդավորման կրճատումը եղել է անօրինական, և տուժած վարձակալները իրենց տանուտերերին վճարած լրացուցիչ վարձավճարի չափով փոխհատուցում ստանալու իրավունք ունեն, քանի որ, եթե չլինեք սուբսիդավորման կրճատումը, նրանք այդ գումարները վճարած չէին լինի: (Հայցը նաև պահանջում էր, որ որոշ մասնակիցներ կարող էին նաև իրավասու լինել ստանալու այլ վնասների փոխհատուցումներ՝ դրանք ապացուցելու դեպքում, և որ Բաժին 8-ի բոլոր ներկա և ապագա մասնակիցները իրավասու են եղել մի որոշման, համաձայն որի, օրինական կարգով պետք է ստանային HACLA-ի հետագա ծանուցումները, և որոնցում պետք է համարժեք կերպով բացատրվեր սուբսիդավորման կրճատման հավանական կամ հնարավոր ազդեցությունը:)

2. Ո՞Վ Է ՀԱՄԱՐՎՈՒՄ ՎՆԱՍՆԵՐԻ ԽՄԲԱՅԻՆ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԳՈՒՄԱՐ ՍՏԱՆԱԼՈՒ ԻՆՎԱՍՏՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՂԱՍ:

Եթե Դուք 2004 թվականի ապրիլի 2-ից ի վեր Վնասների խմբային փոխհատուցման անդամ եք՝ համաձայն Բնակարանի ընտրության վաուչերի վճարման HACLA Բաժին 8-ի ծրագրի ("HCVP") (երբեմն նշվող որպես <<Վաուչերի մասնակից>>) և Ձեր տանուտիրոջը վճարել եք ավելի բարձր վարձավճար, քան կվճարեիք, եթե վճարած չլինեիք 2005 թվականի հուլիսի 1-ից մինչև 2007 թվականի ապրիլի 30-ը գործող կրճատված սուբսիդավորման համար: Որոշակի սահմանափակումներով Դուք կստանաք մինչև 11 ամսվա փոխհատուցում՝ Ձեր կողմից հավելյալ վճարված վարձավճարի դիմաց:

Վնասների խմբային փոխհատուցման անդամների համար նախատեսված (այլ կերպ ասած, նրանք, ովքեր ըստ Բնակարանային և քաղաքային զարգացման բաժանմունքի կանոնակարգերի, չեն ունեցել մեկ տարի առաջ նախապես ծանուցում ստանալու արտոնություն) սակմանափակումներն են. 1) նոր վաուչերի մասնակիցը, որը ներառվել է բնակարանային Բաժին 8-ում՝ 2004 թվականի ապրիլի 2-ից ի վեր; 2) Վաուչերի մասնակիցը, որը 2004 թվականի ապրիլի 2-ին կամ տվյալ ամսաթվից սկսած տեղափոխվել է մեկ այլ Բաժին 8՝ այդ ամսաթվից հետո (նոր Բաժին տեղափոխվելու պահին տվյալ անձը նման իրավասություն չի ունեցել); 3) վաուչերի մասնակիցը, որը 2004 թվականի ապրիլի 2-ից հետո փոխել է վաուչերային ննջասենյակի չափերը (տվյալ անձնավորությունը վաուչերային ննջասենյակի չափերը փոխելու իրավասություն չի ունեցել); 4) վաուչերի մասնակիցը, երբ որ նոր բնակարանային իրավասու մարմնի վճարման Պայմանագիր ("HAP") է կնքվել տվյալ վարձակալի միավորի համար, նույնիսկ, եթե ընտանիքը իր ընթացիկ բնակարանից դեռևս չի տեղափոխվել (այն է, երբ սեփականատերը և ընտանիքը կնքել են վարձակալության նոր պայմանագիր), և 5) վաուչերի մասնակցին հիմնավորված հաշմանդամության համար հատկացվել է բնակարանային սուբսիդիա: Նման բացառությունների կիրառման դեպքում այդպիսի վարձակալները Վնասների խմբային փոխհատուցման դասին չեն պատկանում:

HACLA Բաժին 8-ի մնացած մասնակիցները վարձակալության ժամանակահատվածի համար իրավասու են եղել մեկ տարվա նախապես ծանուցման, ինչպես նաև մինչև 11 ամսվա փոխհատուցման՝ իրենց կողմից հավելյալ վճարված վարձավճարի դիմաց (կախված այն հանգամանքից, թե արդյոք նրանք համապատասխանում են նշված բացառության կատեգորիաներից որևէ մեկին, որը ընդհատել է նրանց փոխհատուցման ժամանակահատվածը):

Խմբային փոխհատուցման դասին Ձեր պատկանելությունը որոշվում է միայն HUD-ի և HACLA-ի գրությունների հիման վրա:

3. Ո՞Ր Է ԱՅՍ ԾԱՆՈՒՑՄԱՆ ԻՄԱՍՏ:

Դուք իրավունք ունեք տեղեկանալու առաջարկված վճարային կարգավորման խմբային հայցի և Ձեր բոլոր տարբերակների վերաբերյալ՝ նախքան դատարանը վճարային կարգավորման վերաբերյալ հավանության վճիռ կայացնի: Ձեր իրավունքները կարող են ազդեցություն կրել այս հայցի հետևանքով:

Այս տեղեկատվությունն ուղարկվում է յուրաքանչյուրին, ով որոշել է խմբային հայցի անդամ հանդիսանալ՝ հիմնվելով HACLA-ի գրությունների վերջին հայտնի հասցեի վրա և որն այլ կերպ հրապարակվում է՝ անդամներին հասանելի դարձնելու նպատակով:

Սույն ծանուցումը բացատրում է հայցը, վճարային կարգավորումը, Ձեր օրինական իրավունքները, հասանելի նպաստները այն անձանց համար, ովքեր ունեն դրա իրավասությունը, և թե ինչպես հայց ներկայացնել:

Գործը վարում է Միացյալ Նահանգների Կալիֆոռնիայի Կենտրոնական նահանգի շրջանային դատարանը, որը գտնվում է Լոս Անջելես, Կալիֆոռնիայում: Գործը հայտնի է որպես *Nozzi v. HACLA, et al.*, Գործ թիվ CV 07-00380 PA (FFMx): Անձինք, ովքեր դիմել են հայցով, կոչվում են Հայցվորներ, իսկ դատավարության ենթակա անձինք՝ Պատասխանողներ: Դատավորը հարգարժան Պերսի Անդերսոնն է:

Հարցեր ունե՞ք: Այցելեք www.HACLAClassAction.com կայք կամ զանգահարեք անվճար 1-888-268-5894 հեռախոսահամարով:

4. ԻՆՉՈ՞Ւ Է ՄԱ ՀԱՄԱՐՎՈՒՄ ԽՄԲԱՅԻՆ ՀԱՅՑ:

Խմբային հայցի պահանջի դեպքում մեկ կամ ավելի անձինք, որոնք համարվում են Խմբային հայցի ներկայացուցիչ(ներ), դատարան են դիմում մի խումբ մարդկանց անունից, որոնք ունեն նմանատիպ հայցային պահանջներ՝ հայցային պահանջի անդամներ: Մեկ դատարանը լուծում է Խմբային հայցի բոլոր ներկայացուցիչների խնդիրները, բացառությամբ նրանց, որոնք իրենց բացառում են այդ դասից:

5. ԻՆՉՈ՞Ւ Է ԱՌԿԱ ՎՕԱՐԱՅԻՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ:

Դատարանը որոշում է կայացրել, որ այս հայցադիմումի որոշ պահանջներ ճիշտ են, սակայն չի որոշել, թե ինչ տեսակի տույժեր կամ վնասներ պետք է կրեն դասի անդամները: Դատավարությունը շարունակելու փոխարեն , երկու կողմերն էլ համաձայնել են գալ խնդրի խաղաղ կարգավորման: Այդ ճանապարհով, երկու կողմերն էլ ի վիճակի են խուսափել դատավարական ռիսկերից և ծախսերից՝ այն վնասների կապակցությամբ, որոնց կարող են իրավասու լինել դասի անդամները կամ դատարանի նման որոշումների դեմ բողոք ներկայացնելուց: գործը կարող է լուծվել անմիջապես; կարգավորման օգուտները կարող են անմիջապես հասանելի դառնալ դասի անդամներին: Դասի ներկայացուցիչները և նրա փաստաբանները կարծում են, որ առաջարկված կարգավորումը արդարացի է դասի անդամների և գործի կողմերի համար, ինչպես նաև համարում են, որ տվյալ դեպքի համար կարգավորման պայմաններն արդարացի են և համարժեք:

6. ԱՐԴՅՈ՞Ք ԿԱՆ ՁԵԶ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՂ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐ:

Դատարանը ունի հավատարմագրված փաստաբաններ (<<դասի խորհրդական>> անվանումով) , որոնք կարող են խմբակային կարգով Ձեզ ներկայացնել: Ձեզնից չի պահանջվի Ձեր անձնական դրամական միջոցներից վճարել դատավարության ընթացքում այս փաստաբանների, նրանց գործընկերների և աշխատակիցների մատուցած ծառայությունների, ինչպես նաև կարգավորման առնչությամբ բանակցություններ վարելու համար: Փոխարենը, փաստաբանները կփորձեն վճարում ստանալ կարգավորման համար դասին հասանելի ֆոնդից, ինչպես նկարագրված է ստորև: Միայն դասի խորհրդականը կարող է գործել դասի անունից: Այնուամենայնիվ, օրենքը Ձեզ չի արգելում ունենալ անձնական փաստաբան, որը Ձեր իրավունքների, տարբերակների և պարտավորությունների վերաբերյալ Ձեզ անձամբ խորհուրդներ կտա, որպես սույն դատավարության դասի անդամ: Եթե Դուք ցանկանում եք, որ Ձեզ ներկայացնի Ձեր անձնական փաստաբանը, Դուք կարող եք փաստաբան վարձել Ձեր հաշվին:

7. ԻՆՉ Է ԱՊԱՀՈՎՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ:

Կարգավորումն ապահովում է ընդհանուր մոտավորապես \$9,000,000 to \$9,400,000 գումարի վճարում (կախված այն հանգամանքից, թե ինչքան գումար կմնա ապահովագրական գումարի վճարումից հետո՝ դատական ծախսերը և փաստաբանների վճարումները կատարելուց հետո): Այս գումարից կկատարվեն հետևյալ պարգևավճարները.

- a. Փաստաբանական վճարումներ, որը չպետք է գերազանցի ընդհանուր մոտավորապես \$9-9.4 միլիոնի 30%-ը:
- b. Դասի փաստաբանի համար կատարվող լրացուցիչ դատավարական վճարումները:
- c. Երրորդ կողմի դասի կարգավորմանն առնչվող հետագա վարչական ծախսերը:
- d. Վճարում Նիդիա Պելեզին՝ նշանակված դասի ներկայացուցչին՝ \$5,000-ի չափով՝ ի հավելումն նրա վարձավճարի փոխհատուցմանը: Տիկ. Պելեզը կարգավորման շրջանակներում կստանա լրացուցիչ գումար՝ դատավարությունում իր ունեցած դերի համար:
- e. Մնացած վճարումները՝ մոտավորապես 5.500.000-6.000.000 ԱՄՆ դոլարի սահմաններում, կկատարվեն դասի մնացած անդամներին, ովքեր լրացուցիչ վարձավճարի գումարի չափով վճարման հայց են ներկայացրել՝ HACLA սուբսիդավորման կրճատման արդյունքում կրած վնասի փոխհատուցման համար:

- f. Եթե ներկայացված հայցային պահանջով ապահովված գումարը համամասն չլինի վնասների խմբային փոխհատուցման դասի անդամների համար հասանելի գումարին, ավելցուկային միջոցները չեն վճարվի և կպահվեն HACLA ապահովագրողների կողմից: Այնուամենայնիվ, եթե այդ ֆոնդը կազմի \$2,000,000-ից ավելի քիչ գումար, վնասների խմբային փոխհատուցման դասի անդամներին կամ կազմակերպություններին, որոնք աջակցում են Բաժին 8-ի վարձակալներին, ոչ մի դեպքում չեն կատարվի բոլոր վճարումները: (Պատճառն այն է, որ եթե դասի ներկայացրած հայցային պահանջի գումարը չի համապատասխանում \$2,000,000-ին, ապա \$2,000,000-ի և ներկայացված գումարային պահանջի տարբերությունը կվճարվի այն կազմակերպություններին, որոնք աջակցում են Բաժին 8-ի վարձակալներին:)
- g. Եթե վնասների խմբային փոխհատուցման դասի անդամների ներկայացրած հայցապահանջի ընդհանուր գումարը գերազանցում է վճարման համար հասանելի միջոցները, նրանց վճարման ենթակա գումարը համամասնորեն կնվազեցվի: (Օրինակ, եթե գումարը բավարարում է ընդհանուր հայցային պահանջի միայն 75%-ի վճարման համար, դասի յուրաքանչյուր անդամին կվճարվի վճարման ենթակա վնասի գումարի 75%-ի չափով:)

Ի հավելումն դրան, դատարանը կիրահանգի, որ հաջորդ երեք տարիների ընթացքում Բաժին 8-ի բնակիչների համար վաուչերային վճարման հետագա կրճատման վերաբերյալ ծանուցումները լինեն հստակ, հասկանալի լեզվով, և դրանք հասկանալի լինեն Բաժին 8-ի միջին կրթություն ունեցող վարձակալի համար:

8. ԱՐՅՈՒՔ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ ԿԱԶՄԻ ԲԱԺԻՆ 8-Ի ԿԱՍ ԻՄ ԿՈՂՄԻՑ ՍՏԱՑՎԵԼԻՔ ՍՅԼ ՕԳՈՒՏՆԵՐԻ ՎՐԱ:

Կարգավորման պայմանների համաձայն, HACLA-ն դասի անդամներին վճարվելիք գումարները կդիտարկվեն որպես անձնական վնասվածքի փոխհատուցում, որը, HUD-ի 24 C.F.R. § 5.609(c)(3) կանոնակարգի համաձայն, դուրս կբերվի եկամտի ցանկացած հաշվարկից, այն է՝ հաջորդ վերանայման ընթացքում Բաժին 8-ի համար նախատեսված աջակցությունը ստանալու համար Ձեր իրավասությունը որոշելու վերաբերյալ որոշում կայացնելիս, Ձեր կողմից ստացվելիք վնասների փոխհատուցման վճարումները չեն հաշվարկվի որպես Ձեր եկամտի մաս: Այնուամենայնիվ, եթե Դուք ունեք ակտիվներ, HACLA- ն կարող է հաշվարկել այդ ակտիվներից ստացված ցանկացած եկամուտը: Դրա կապակցությամբ հարցեր ունենալու կամ հետագա պարզաբանումների կարիք առաջանալու դեպքում, HACLA-ն նախատեսել է Patricia Mendoza, 8-րդ օժանդակ բաժնի ղեկավար, այս հարցերով կոնտակտային օղակ:

Հանրային նպաստների այլ ծրագրերի առնչությամբ, դասի խորհրդի անդամները հանրային նպաստների բոլոր ծրագրերի եկամուտների կամ ակտիվների քաղաքականության մասով գիտակներ չեն: Եթե վստահ չեք, թե ինչպես կարող է Ձեր կողմից որևէ գումարի ստացումը ազդել Ձեր կողմից ստացվող այլ նպաստների վրա, ապա դա պետք է քննարկեք տվյալ ծրագրերի աշխատակիցների հետ կամ փնտրեք իրավաբանական այլ խորհրդատվություն: Դուք պետք է նրանց տրամադրեք դատարանի կողմից վավերացված սույն ծանուցման կրկնօրինակը և հայտնեք նրանց, որ Ձեզ փոխհատուցում են նախկինում վճարված վարձավճարի դիմաց՝ համաձայն մի ծանուցման, որը դատարանի կողմից ճանաչվել է անօրինական:

9. ԱՐՅՈՒՔ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՐՅՈՒՔՆԵՐՈՒՄ ԵՍ ԿՍՏԱՆԱՍ ՈՐԻՔ ԲԱՆ:

Եթե Դուք ստանաք Ձեզ ուղղված հայցային պահանջի ձևաթուղթ, այն կհաստատի վնասների առավելագույն գումարը, որ Դուք իրավասու եք ստանալ, եթե առկա են բոլոր հայցային պահանջների բավարարման համար հասանելի միջոցներ: Եթե Դուք դատարանի կողմից սահմանված ժամկետներում ներկայացնեք հաստատված հայցային պահանջ, Դուք իրավասու կլինեք ստանալ Ձեր հայցային պահանջում ներկայացված գումարի կամ նվազեցված գումարի չափով, եթե ընդհանուր հայցային պահանջները գերազանցում են հասանելի միջոցները: Եթե ընդհանուր հայցային պահանջները գերազանցում են հասանելի միջոցները, ապա դասի յուրաքանչյուր անդամին փոխհատուցվելիք գումարները կնվազեցվեն համամասնորեն:

Հիմնվելով կարգավորման պայմանների վրա՝ գնահատվել է, որ վնասի խմբային փոխհատուցման դասի յուրաքանչյուր անդամ իր ունեցած իրավասության սահմաններում չպետք է ստանա կրած առավելագույն վնասի 50%-ից պակաս գումար: Եթե Դուք ներկայացնեք հաստատված հայց, ապա կստանաք Ձեր անհատականացված հայցային պահանջի ձևաթուղթում նշված գումարի 50%-ից մինչև 100%-ը՝ կախված այն հանգամանքից, թե քանի հայց եք ներկայացրել: Եթե հայցային պահանջի ձևաթուղթը ձեռք էք բերել կայքից, այն Ձեզ չի հայտնի, թե որն է փոխհատուցման ենթակա առավելագույն գումարը, քանի որ այն չի անհատականացվել:

Առաջարկված համակարգի ամբողջական նկարագրությունը ներկայացնում է, թե ինչքան փոխհատուցում կստանա վնասի խմբային փոխհատուցման դասի յուրաքանչյուր անդամը՝ համաձայն կողմերի կարգավորման համաձայնագրի, որը հասանելի է www.HACLAClassAction.com կայքում:

10. ԻՆՉ ՊԵՏՔ Է ԵՍ ԱՆԵՄ՝ ԳՈՒՄԱՐ ՍՏԱՆԼՈՒ ՀԱՄԱՐ:

Եթե դուք ցանկանում եք վճարային կարգավորման գումար ստանալ, Դուք պետք է լրացնեք և հանձնեք ուղեկցող հայցադիմումի ձևաթուղթը: Ուշադրությամբ կարդացեք հայցային պահանջի ձևաթուղթում ներառված հրահանգները: **Հայցային պահանջի բոլոր ձևաթուղթերը պետք է լրացվեն և փոստային կնիքով կնքվեն (կամ ստացվեն ադմինիստրատորի կողմից)՝ ոչ ուշ, քան 2017 թվականի դեկտեմբերի 6-ը**, սակայն այս հնարավորությունը բաց չըողնելու համար հայցային պահանջի ձևաթուղթը պետք է հնարավորինս շուտ լրացնեք և էլեկտրոնային փոստով ուղարկեք: **Եթե ժամանակին և պատշաճ կերպով չհանձնեք հայցային պահանջի Ձեր ձևաթուղթը, չեք ստանա որևէ գումար** կարգավորումից: Եթե Ձեզ անհրաժեշտ է հայցային պահանջի ձևաթղթի կրկնօրինակ, խնդրում ենք զանգահարել 1-888-268-5894 (անվճար) հեռախոսահամարով, կամ գրել *Nozzi v. HACLA-ի* կարգավորման ադմինիստրատորին, փոստային արկղ՝ 7028, Broomfield, CO 80021 կամ ձևաթուղթը ներբեռնեք համացանցի՝ www.HACLAClassAction.com կայքից:

11. ԻՆՉ ՏԵՂԻ ԿՈՒՆԵՆԱ, ԵԹԵ ԵՍ ԴԵՌ ԶԳԻԵՄ, ԹԵ ԱՐՊՅՈՒՄ ՀԱՄԱՐՎՈՒՄ ԵՆ ԴԱՄԻ ԱՆԴԱՄ:

Եթե Դուք վստահ չեք, թե արդյոք ներառված ք այս դատում, զանգահարեք 1-888-268-5894 հեռախոսահամարով կամ գրեք՝

Nozzi v. HACLA Settlement Administrator
c/o JND Class Action Administration
PO Box 7028
Broomfield, CO 80021

Արդյոք ք կհամարվեք Խմբային հայցի անդամ թե ոչ, կորոշվի բացառապես HUD-ի և HACLA-ի գրառումների հիման վրա:

12. ՈՐՔԱՆ ԿԿՃԱՐՎԵՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԸ:

Դատարանը դեռևս չի սահմանել, թե որքան կլինի Խմբային իրավախորհրդատուի վճարման չափը: Այնուամենայնիվ, նրանք կխնդրեն Դատարանից փաստաբանների խելամիտ վճար՝ մինչև ընդհանուր առկա Խմբային հիմնադրամի 30 տոկոսը, որը տատանվում է 9,000,000 ԱՄՆ դոլարից մինչև 9,400,000 ԱՄՆ դոլար՝ գումարած դատական գործի ընթացքում կատարված ծախսերը: Դատարանը կարող է պարզևատրել հիշյալ գումարից պակաս, բայց ոչ ավելի: Ձեզանից չի պահանջվի անձամբ վճարել փաստաբանին այն գումարը, որը պետք է վճարի Դատարանը Խմբային իրավախորհրդատուին: Ձեզ դատարանում ներկայացնելու նպատակով անձնական փաստաբան վարձելու դեպքում միայն ստիպված կլինեք անձամբ վճարել վեջինիս:

13. ԿԱՐՈՂ ԵՄ ԱՐՊՅՈՒՄ ՀՐԱԺԱՐՎԵԼ ԴԱՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՄՆԱԿՑԵԼՈՒՑ:

Եթե չեք ցանկանում լինել Խմբային հայցի անդամ, կամ եթե ցանկանում եք հարուցել Ձեր անձնական դատական գործը, կամ դառնալ մեղադրյալների դեմ հարուցված մեկ այլ դատական գործի անդամ, ովքեր սվյալ դատական գործում ներգրավված հայցեր են ներկայացնում, ապա պետք է միջոցներ ձեռնարկեք խմբից դուրս գալու համար: Մա կոչվում է խմբից “ինքդ քեզ բացառում”, իսկ երբեմն էլ՝ “հրաժարում”:

14. ԻՆՉ ՊԵՏՔ Է ԱՆԵԼ ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՆ ՄԱՄՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԻՑ ՀՐԱԺԱՐՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ:

Դատական գործին չմասնակցելու համար, դուք պետք է առաջին կարգի փոստով նամակ ուղարկեք՝ հստակորեն նշելով, որ *հրաժարվում եք մասնակցել Nozzi v. HACLA-ի* դատական գործընթացին: Նշեք Ձեր անունը, հասցեն, հեռախոսահամարն ու ստորագրությունը: Ձեր փաստաբանի անունն ու հասցեն բավարար չէ: **Դուք պետք է փոստով ուղարկեք դատական նիստից Հրաժարման խնդրանքը՝ փոստաղորդված ոչ ուշ քան 29 նոյեմբերի, 2017թ.՝ հետևյալ, հասցեով՝**

Nozzi v. HACLA Settlement Administrator
c/o JND Class Action Administration
PO Box 7028
Broomfield, CO 80021

Դուք չեք կարող հրաժարվել մասնակցությունից հեռախոսով կամ էլեկտրոնային նամակով տեղեկացնելու միջոցով: Եթե հրաժարվեք մասնակցությունից, ապա կգրվվեք դատական կարգավորման որևէ գումար ստանալու իրավասությունից, չեք կարողանա բողոքարկել Կարգավորումը, և ոչ էլ որևէ կերպ իրավաբանորեն պարտավորված կլինեք դատական գործի ընթացքում տեղի ունեցող որևէ բանի հետ:

Քանի դեռ չեք հրաժարվել խմբից, դուք կշարունակեք մնալ խմբում և կգրկվեք սույն հայցում ներկայացված վարքի համար Մեղադրյալների նկատմամբ ունեցած Ձեր բոլոր իրավունքներից, բացառությամբ սույն Կարգավորմամբ Ձեզ հասանելի իրավունքներից: Մա նշանակում է, որ եթե դուք չհրաժարվեք, կամ հայց չներկայացնեք, ապա չեք ստանա որևէ գումար, և միաժամանակ կկորցնեք Մեղադրյալների նկատմամբ ունեցած Ձեր իրավունքները: **Անպայման ներկայացրեք Հայցային պահանջի ձևաթուղթ, եթե չեք պատրաստվում հրաժարվել մասնակցությունից: (Եթե հրաժարվում եք մասնակցությունից և ցանկանում եք բողոքարկել այլ վնասներ սույն հայցում ներկայացված վարքի համար, ապա պետք է Մեղադրյալների դեմ ներկայացնեք Ձեր սեփական բողոքը:)**

Ցանկացած ոք, ով ներկայացնում է հաստատված հայց, պետք է ստանա Վնասների Խմբային հայցի անդամների Հայցային պահանջի ձևաթղթի վրա նշված գումարի առնվազն 50 տոկոսը, և կարող է ստանալ ավելին՝ ընդհուպ Հայցային պահանջի ձևաթղթի վրա նշված ամբողջ գումարը:

15. Ի՞ՆՉ Է ՆՇԱՆԱԿՈՒՄ ՊԱՀԱՆՋԻՑ ՀՐԱԺԱՐՈՒՄ

Որպես դատական Կարգավորման մի մաս դուք հրաժարվում եք սույն դատական գործում ներառված պահանջներից այն գումարի դիմաց, որը կստանաք, եթե չհրաժարվեք խմբային հայցին մասնակցությունից: Հաստատման և կարգավորման առաջարկվող վերջնական անդորրագրում (կարող եք գտնել սույն դատավարության կայքում՝ www.HACLAClassAction.com հասցեում) նկարագրված են մեղադրյալների դեմ ներկայացված այն իրավական պահանջները, որոնցից դուք կգրկվեք, եթե մնաք խմբում (այսինքն, եթե դուք չհրաժարվեք մասնակցությունից վերոհիշյալ “Ի՞նչ պետք է անել դատական գործին մասնակցությունից հրաժարվելու համար” բաժնում նկարագրված կարգով): Հրաժարված պահանջներն ներառում են բոլոր հայցերը, պահանջները, հայցի ներկայացման պատճառները՝ թե խմբային, թե անհատական, և թե բնույթով ուրիշները, վնասները՝ անկախ դրանց վաղեմությունից, ցանկացած բնույթի պարտավորությունները, ներառյալ ծախսերն ու ծախքերը, տույժերն ու փաստաբանների վճարները, որոնք ներառվել կամ հնարավոր է ներառված լինեն բողոքում՝ հիմնվելով ենթադրյալ փաստերի վրա, մասնավորապես, HACLA-ի սուբսիդավորման ոչ պատշաճ ձևով նվազեցված վարձավճարների համար: Սույն հրաժարված պահանջները ներառում են ցանկացած այլ հարակից բողոքներ, գանգատներ և/կամ հայցեր, թե իրավաբանական, թե վարչական՝ անկախ դրանց փաստացի ներկայացված լինել կամ չլինելուց: Հրաժարված պահանջները չեն ներառում այլ հայց(եր), որոնք Հայցվորը կամ խմբային հայցերի անդամները կարող են ունենալ HACLA-ի դեմ այնպիսի վարքի համար, որը ներառված չէ սույն Կարգավորման մեջ (օրինակ, սույն գործի հետ չառնչվող ապօրինի վտարման հայցը):

16. ԵԹԵ ԵՄ ՀԱՍՏԱՋԱՑ ԶԵՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԵՏ ԿԱՍ ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄ ԵՄ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՎՃԱՐՆ, ԱՊԱ ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Է ՏԵՂԵԿԱՑՆԵՄ ԴՏԱՐԱՆԻՆ ԱՅՂ ՄԱՍԻՆ:

Եթե դուք խմբային հայցի անդամ եք և նախընտրում եք մնալ անդամ, ապա Կարգավորման որևէ մասի հետ համամիտ չլինելու դեպքում կարող եք բողոքարկել այն, կամ բողոքարկել փաստաբանների վճարների պահանջը: Դուք կարող եք պատճառաբանել, թե ինչու եք կարծում, որ Դատարանը չպետք է հաստատի Կարգավորումը կամ փաստաբանների պահանջված վճարը (այսինքն, հասարակ հայտարարություն, թե “Ես առարկում եմ” բավարար չի լինի: Առարկելու համար դատարանին բանավոր կերպով մի դիմեք: Ավելին, դուք պետք է գրավոր հայտարարություն ուղարկեք՝ էջի վերևում նշելով դատավարության անվանումն ու համարը (*Nozzi v. HACLA*, Դատավարություն No. CV 07-00380 PA (FFMx)): Ի լրումն սրա, նշեք Ձեր անունը, հասցեն, (Ձեզ ներկայացնող փաստաբանի հասցեն նշելը բավարար չէ) հեռախոսահամարը, և այն պատճառաբանությունը, թե ինչու եք առարկում: Եթե Ձեզ ներկայացնում է իրավաբան, ապա դուք պետք տրամադրեք վերջինիս անունը, հասցեն և հեռախոսահամարը: **Դուք պետք է Ձեր առարկություններն ու աջակցող փաստաթղթերը ուղարկեք Դատարան և իրավախորհրդատուին առաջին կարգի փոստով՝ փոստադրոշմված ոչ ուշ քան 29 նոյեմբերի, 2017թ.** հետևյալ հասցեով՝

<p>Տարածքային դատարանի քարտուղար Միացյալ Նահանգների տարածքային դատարանի Կալիֆոռնիայի Կենտրոնական շրջան First Street Courthouse 350 West 1st Street Courtroom 9A, 9th Floor, Los Angeles, California 90012</p>	<p>Barrett S. Litt Հասցեստեղ՝ Julia White Kaye McLane, Bednarski & Litt 234 East Colorado Boulevard Suite 230 Pasadena, California 91101</p>	<p>Brant Dveirin Lewis Brisbois Bisgaard & Smith LLP 633 West Fifth Street Suite 4000 Los Angeles, California 90071</p>
--	--	--

Եթե Դուք չեք ներկայացնում նախապես պատրաստված Հայցադիմումի ձևաթուղթ, Դուք պետք է բավարար քանակի բացահայտող տեղեկություններ ներկայացնեք (օրինակ՝ վարարդական, իրավունք, հասցե՝ Section 8-ում գտնվելիս, ծննդյան ամսաթիվ և Մոցիսկայան ապահովության համարի վերջին չորս նիշերը)՝ պատճենները ուղարկելով վերոնշյալ փաստաբաններին, որպեսզի Ձեր գործը հնարավոր լինի գտնել: Ձեր գաղտնիությունը պաշտպանելու համար, այս տեղեկությունները Դատարան մի ուղարկեք, քանզի Դատարան ներկայացրած տեղեկությունները համարվում են հանրային փաստաթուղթ:

Առարկություն ներկայացնելը չի երկարացնի այն ժամկետն, որի ընթացքում Խմբի անդամը կարող է Կարգավորումից բացառում խնդրել: (Եթե բացառում պահանջեք, Դուք այլևս Վնաս կրած խմբի անդամ չեք լինի և որևէ առարկություն չի ուսումնասիրվի:)

Կարգավորման փաստաթղթերի ամբողջական փաթեթը, ներառյալ Կարգավորման համաձայնագիրը, Հայցադիմումի ձևաթուղթը, փորձագետի զեկույցները, որը բացատրում է, թե ինչպես են հայտնաբերվել Խմբի անդամները, Հաստատման և կարգավորման առաջարկվող վերջնական կարգը և Փաստաբանների վճարի դիմումը և ծախսերը մատչելի են (կամ մատչելի կլինին, եթե փաստաբանների վճարի դիմում դեռ չի ներկայացվել) գործի կայքում՝ www.HACLAClassAction.com հասցեով:

17. ՈՐՐ Է ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՐԿՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱՅԱՌՄԱՆ ՄԻՋԵՎ:

Առարկելը՝ ուղղակի հայտարարելն է Դատարանին, որ Ձեզ ինչ-որ բան դուր չի գալիս Կարգավորման մեջ: Դուք կարող եք առարկել միայն, եթե մնաք խմբում: Եթե Դուք առարկեք և Դատարանը մերժի Ձեր առարկությունը, Դուք կմնաք խմբի անդամ և Ձեզ կվերաբերի գործի որևէ արդյունք, և, եթե պահանջ ներկայացնեք, Կարգավորման շրջանակներում վճարման իրավունակ կլինեք: Բացառելով ինքներդ Ձեզ՝ Դատարանին կտեղեկացնեք, որ չեք ցանկանում խմբի մաս կազմել: Եթե բացառեք ինքներդ Ձեզ, Դուք հիմքեր չեք ունենա առարկելու համար, քանզի գործն այլևս Ձեզ չի վերաբերում:

18. ԵՐԲ ԵՎ ՈՐՏԵՔ Է ԴՏԱՐԱՆԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՀԱՍՏԱՏԵԼ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՓԱՏԱԲԱՆՆԵՐԻ ՎՃԱՐՆԵՐԸ:

Դատարանը Արդարության լուսնները նշանակել է 2018թ. հունվարի 29-ին, United States District Courthouse for the Central District of California, First Street Courthouse, 350 West 1st Street, Courtroom 9A, 9th Floor, Los Angeles, California 90012: Այս Լսման ժամանակ Դատավոր Anderson-ը կորոշի թե արդյոք Կարգավորումն արդար է, ողջամիտ և համապատասխան, և կորոշի փաստաբանների վճարի գումարը և տրամադրվող վճարները: Եթե որևէ առարկություն լինի, Դատարանը կքննարկի դրանք և որոշում կկայացնի: Մենք չգիտենք, թե որքան է տևելու այդ գործընթացը: Մենք չգիտենք, թե արդյոք Լսումը շարունակվելու է: Եթե դա տեղի ունենա, նոր ծանուցում չի լինելու: Դուք կարող եք խոսել Լսման ժամանակ, սակայն միայն, եթե ներկայացրել եք Ձեր մեկնաբանությունները կամ առարկությունները վերոհիշյալ «Եթե ինձ դուր չի գալիս Կարգավորումը կամ ես առարկում եմ փաստաբանների վճարի դեմ, ինչպե՞ս կարող եմ տեղեկացնել Դատարանին» բաժնի համաձայն: (տես հարց համար 16):

19. ԱՐՅՈՔ ՍՏԻՎԱՄԾ ԵՄ ՄԱՍՆԱԿՑԵԼ ԼՍՄԱՆԸ:

Ոչ, Դուք կարող եք, կսակայն ստիպված չեք մասնակցել Լսմանը: Խմբի փաստաբանը կպատասխանի Դատարանի բոլոր հարցերին: Սակայն, Դուք կարող եք գալ, եթե ցանկանաք, բայց ծախսերն ինքներդ եք վճարելու: Եթե Դուք գրավոր առարկություն եք ուղարկել, Դուք կարող եք, սակայն պարտավոր չեք գալ Դատարան դրա մասին խոսելու համար: Եթե Դուք պատշաճ կերպով ներկայացրել եք Ձեր առարկությունը, Դատարանը այն կուսումնասիրի: Դուք կարող եք նաև վճարել Ձեր անձնական փաստաբանին մասնակցության համար, սակայն դա անհրաժեշտ չէ:

20. ԿԱՐՈՂ ԵՄ ԱՐՅՈՔ ԽՈՍԵԼ ԼՍՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ:

Դուք չեք կարողանա խոսել, եթե չեք ներկայացրել Ձեր մեկնաբանությունները կամ առարկությունները՝ «Եթե ինձ դուր չի գալիս Կարգավորումը կամ ես առարկում եմ փաստաբանների վճարի դեմ, ինչպե՞ս կարող եմ տեղեկացնել Դատարանին» բաժնի համաձայն: (տես հարց համար 16): (տես հարց համար 16) և չեք նշել Ձեր փաստաթղթում, որ ցանկանում եք խոսել: Դուք չեք կարող խոսել Լսման ժամանակ, եթե Դուք բացառել եք ինքներդ Ձեզ: Եթե առարկություն եք ներկայացրել, Դատարանը կորոշի, թե արդյոք պետք է նաև Ձեր բանավոր կարծիքը լսել:

21. ԻՆՉ ԿԼԻՆԻ, ԵԹԵ ԵՄ ՈՉԻՆՉ ՉԱՆԵՄ:

Եթե Դուք ոչինչ չանեք, դա կազդի Ձեր իրավունքների վրա: Դուք կենթարկվեք Կարգավորման պայմաններին և կհամաձայնեք Կարգավորման մեջ ներառվող պահանջների ազատմանը: Սակայն, **եթե հայցադիմում չներկայացնեք, Դուք իրավասու չեք լինի Կարգավորումից ստանալու որևէ գումար, չնայած որ պետք է ենթարկվեք դրան:**

22. ԵՐԲ ԳՈՒՄԱՐ ԿՍՏԱՆԱՍ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԻՑ:

Գումար չի վճարվի, մինչև 1) Կարգավորման գումարները տրամադրվեն Կարգավորման կառավարչին, որը տեղի կունենա միայն Կարգավորման հաստատումից և բողոքարկման հնարավորությունների վերաբումից 30 օր հետո և 2) բողոքը ձուստով ուղարկելու կամ ներկայացնելու Դատարանի կողմից նշանակված օրվանից հետո: Դրանից հետո առնվազն երկու ամիս և ավելին կպահանջվի բոլոր պահանջները մշակելու, Խմբի յուրաքանչյուր անդամին տրամադրվելիք գումարը հաշվելու և Խմբի անդամների կողմից ուղարկված գումարը ստանալու համար: Եթե հայցադիմում եք ներկայացրել և դրամ չեք ստացել **2017թ. դեկտեմբերի 6-ից** հետո վեց ամսվա ընթացքում, որը վերջին օրն է պահանջը փոստով ուղարկելու կամ ներկայացնելու համար, այցելեք այս գործի կայքը տեսնելու, թե երբ է ակնկալվում վճարի ուղարկումը, կամ կապվեք Կարգավորման կառավարչի հետ՝ 1-888-268-5894 համարով կամ նամակ ուղարկեք՝

Nozzi v. HACLA Settlement Administrator
c/o JND Class Action Administration
PO Box 7028
Broomfield, CO 80021

Մենք խորհուրդ ենք տալիս պահել Ձեր Հայցադիմումի ձևաթղթի պատճեն: Դուք կարող եք Ձևաթուղթը ուղարկել վկայագրված նամակով, որպեսզի դա կարելի լինի ստուգել, սակայն Ձեզանից դա չի պահանջվում անել:

23. ԻՆՉ ԿԼԻՆԻ, ԵԹԵ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ ՉԼԻՆԻ:

Որոշ դեպքերում հնարավոր է, որ Կարգավորում տեղի չունենա (օրինակ՝ եթե շատերը որոշեն չմասնակցել, եթե որևէ պատճարով Դատարանը որոշի չհաստատել Կարգավորումը): Այս դեպքում, գործը կլսվի դատավարության ժամանակ:

24. ԿԱՆ ԱՎԵԼԻ ՏՎՅԱԼՆԵՐ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ:

Այս Ծանուցումը հիմնականում ամփոփում է առաջարկվող Կարգավորումը: Կարգավորման փաստաթղթերի, Փաստաբանների վճարների տրամադրմանն դիմումի և արժեքների պատճենները տեսնելու համար Դուք կարող եք այցելել www.HACLAClassAction.com կայքը: Այս կայքը պարունակում է նաև վիճակագրական փորձագետի հաշվետվությունները, ով ուսումնասիրել է HUD-ի և HACLA-ի տվյալները պարզելու համար, թե ովքեր են եղել Վնաս կրած պմբի անդամները և պարզելու անդամների կրած վնասի գումարը: Եթե Կարգավորման պայմանների այս Ծանուցման որևէ նկարագրություն հակասում է Կարգավորման փաստաթղթերի իրական պայմաններին, Կարգավորման փաստաթղթերի պայմանները գերակայող են: